ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄ

ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐՆ ԱՄՓՈՓԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) որակավորման հանձնաժողովը,

հաշվի առնելով «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի շրջանավարտների 2022թ. աշնան վերահանձնման որակավորման քննության ամփոփման անհրաժեշտությունը,

նկատի ունենալով առարկայական քննական հանձնախմբերի անդամների կողմից որակավորման քննության գրավոր առաջադրանքները ստուգելու հանգամանքը,

հաշվի առնելով որակավորման քննության արդյունքներն ըստ ծածկագրերի գնահատված լինելու, ինչպես նաև ծածկագրերին համապատասխանող հավակնորդների անուն, ազգանունների ցուցակները կնքված արկղերում տեղադրված լինելու հանգամանքը,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 12-րդ և 45.11-րդ հոդվածների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի 15.03.2019թ. թիվ 5/13-Լ որոշմամբ հաստատված Որակավորման քննության ընդունման և հանձնման կարգի 93-րդ կետի պահանջներով,

ՈՐՈՇԵՑ՝

1. Ամփոփել հայցադիմում կազմելու վերաբերյալ գրավոր աշխատանքների գնահատականները՝ համաձայն հավելված 1-ի:

2. Ամփոփել դատավճռի դեմ վերաքննիչ բողոք կազմելու վերաբերյալ գրավոր աշխատանքների գնահատականները՝ համաձայն հավելված 2-ի:

3. Տեղադրել սույն որոշման հավելվածները Պալատի կայքում և փակցնել՝ Պալատի 4-րդ հարկում գտնվող ցուցատախտակի վրա:

4. 2023թ. հունվարի 30-ին ժամը 18:00-ին ք.Երևան, Զաքյան 7-2 հասցեում գտնվող Պալատի շենքի 4-րդ հարկի մեծ դահլիճում բացել կնքված արկղը և հանել ծածկագրերի թերթիկները:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի որակավորման
հանձնաժողովի նախագահ՝ Սիմոն Բաբայան

Որոշում N 1-Ա
ք. Երևան
30 հունվարի 2023թ.

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության փաստաբանների
պալատի որակավորման հանձնաժողովի
30.01.2023թ. թիվ 1-Ա որոշման

Հանձնաժողովի նախագահ՝ Սիմոն Բաբայան

ՔԱՂԱՔԱՑԻԱԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ
հայցադիմում կազմելու վերաբերյալ գրավոր աշխատանքների ամփոփման արդյունքում գնահատված ծածկագրերի
հեղինակների ցանկ

Բաժին[1]	**Ծածկագիր**	**Նշում որակավորման քննությունը հանձնած լինելու մասին**
1.	790001	հանձնել է
2.	790002	հանձնել է
3.	790003	հանձնել է
4.	790004	հանձնել է
5.	790005	հանձնել է
6.	790006	հանձնել է
7.	790007	հանձնել է
8.	790008	հանձնել է
9.	790009	հանձնել է
10.	790010	հանձնել է

ՀՀ փաստաբանների պալատի
որակավորման հանձնաժողովի
քարտուղար՝ Արմինե Ֆանյան

[1] Սույն հավելվածի անբաժանելի մասը հանդիսացող բաժիններում կցված են գնահատականի հաստատման կամ գնահատման պատճառաբանությունները

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության փաստաբանների
պալատի որակավորման հանձնաժողովի
30.01.2023թ. թիվ 1-Ա որոշման

Հանձնաժողովի նախագահ՝ Սիմոն Բաբայան

ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ
դատավճռի դեմ վերաքննիչ բողոք կազմելու վերաբերյալ գրավոր աշխատանքների
ամփոփման արդյունքում գնահատված ծածկագրերի
հեղինակների ցանկ

Բաժին[2]	**Ծածկագիր**	**Նշում որակավորման քննությունը հանձնած լինելու մասին**
1.	4809543	հանձնել է
2.	4809544	հանձնել է
3.	4809545	հանձնել է
4.	4809547	հանձնել է

ՀՀ փաստաբանների պալատի
որակավորման հանձնաժողովի
քարտուղար՝ Արմինե Ֆանյան

[2] Սույն հավելվածի անբաժանելի մասը հանդիսացող բաժիններում կցված են գնահատականի հաստատման կամ գնահատման պատճառաբանությունները